



9128

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՐԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՏՇՈՒԱԿԱՏԱՐ
Ո. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«13» 07 2021թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0124-21

Ձեռնարկող՝

Քաղաքացի S. Ասլանյան

Գործունեությունը՝

**Ծովազարդ համայնքի Լճափնյա 12/1 հասեղում
նախագրեսավող մեկ հարկանի քոթեջների կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայկ**

Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան



Առջիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0124-21

<13> 07 2021թ.

**Ծովագարդ համայնքի Լճափնյա 12/1 հասցեում նախադեսվող հանգստի գոյուր
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայք**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ քաղաքացի S. Ասլանյան

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Ծովագարդ համայնք

Քաղաքացի S. Ասլանյանի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով
նախատեսվում է՝ Ռուբեն Մովսիսյանին պատկանող հողատարածքում, Գեղարքունիքի մարզի
Ծովագարդ համայնքի Լճափնյա 12/1 հասցեում կառուցել հանգստի գոտի:

Գործունեությունն իրականացվելու է Ծովագարդի համայնքաթարանի կողմից 2020թ
հունիսի 7-ին տրամադրված N02/20 նախագծման թույլտվության հիման վրա, անշարժ գույքի
նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներով ենթավարձակալության
հիմունքներով՝ ամրագրված՝ 0.3հա մակերեսով հողամասում, որի նպատակային
նշանակությունը անտառային է: Համաձայն նախագծման թույլտվության հողատարածքի
մակերեսը կազմում է 0.2655հա, այդ տարբերությունն առաջացել է Սևանա լճի ջրի
մակարդակի բարձրացման արդյունքում:

«Շրջակա միջավայրի վրա ազդցության գնահատման և փորձաքննության մասին» <<
օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 8) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող
գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի
մարզում, փոքր Սևանի հարավ-արևմտյան ափին, Սևան քաղաքից 17 կմ հեռավորության վրա:
Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի լեռնային հրաբխային
սարահարթի հյուսիսային ծայրամասում: Ուկիեֆը անհարթ բլրային է: Տարածաշրջանի
մակերևույթի բարձրությունները տատանվում են 1898-2000մ սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի 3-րդ
ռեզերվացիոն և 7-րդ տնտեսական գոտիներում, մոտակա արգելոց «Նորաշենի» արգելոցն է
3կմ հեռավորությամբ: Թերակղու այս հատվածը գտնվում է մարդածին ազդցության ներքո
և կիրավում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածքի
ուսումնասիրության ընթացքում Կարմիր գրքում գրանցված բուսաբանական և
կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:



Համաձայն նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ հայտ) ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է 1916 մետր բարձրությունից ցածր: Առկա են ռելիեֆի մեծ թերություններ և քարաժայուրներ: Անտառային տնկարկները քիչ են, հիմնականում հանդիս են գալիս չիշխանի, ուղենու և թեղու ծառուտներ: Նախատեսվող գործունեության տարածքի հողերը՝ Սևանա լիի բուսազուրկ հատակային հողեր են, տարածքում առկա են բազմամյա խոտի տեսրով տեղ-տեղ խառը աճած բուսականություն: Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 15-20սմ:

Համաձայն հայտի նախագծվող քոթեջները տեղադրվելու են Սևանա լճի ափին՝ Ծովազարդ գյուղի ափամերձ հատվածում: Հողամասը կառուցապատումից ազատ, միջին թեքություններով, չծառապատկած տարածք է, որտեղ առկա է քարե պարիսապ 160գմ ընդհանուր երկարությամբ, ինչը ենթակա է ապամոնտաժման, որպես ապորինի շինություն:

Հոդամասի 47.13% գտնվում է 1905.Օմ բացարձակ նիշերից բարձր ընկած հատվածում: Տարածքի մուտքն իրականացվելու է Երևան-Սևան-Գավառ ավտոմայրուղուց՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով: Հեռավորությունն ավտոմայրուղուց 30մ է:

Անանա լիի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտուորման նախագծի պահանջներին համապատասխան 1905.0մ բացարձակ նիշից զարդ տարածքում հիմնական շինություններ չեն նախատեսվում:

Նախատեսվող քոյթեջները երեք տեսակի են, որոնցից առաջին տեսակի երկու քոյթեջները նախագծված է որպես հիմնական շինություն, քանի որ գտնվում է 1905մ նիշից բարձր, մասնավորապես՝ 1906մ նիշի վրա: Նախատեսվում է կառուցել քարից, ունենալու է երկու ննջասենյակ, մեկ շոգեքաղնիք և մեկ սանհանգույց, դիմացի հատվածում լինելու է մուտքի հարթակ, որը ամառային օրերին հյուրասենյակի հետ դառնալու է մեկ ամբողջություն:

Միջնորմերը նախատեսված է իրականացնել թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բուկներից, հետագայում անցքերը լցնելով B10 դասի շաղախով:

Քոթեզ 2 ից նախատեսվում է կառուցել երեք հատ, քոթեզ 3-ից՝ 1 հատ, նախատեսվում է իրականացնել թերև մետաղական կոնստրուկցիաներով (շարժական), տեղադրման նիշը՝ 1903.5-1905.64մ հատված: Շարժական քոթեզների ամրացումն իրականացվելու է ցցային հիմքերի միջոցով:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 0.3հա,
 - հիմնական կառույցների մակերես (քոթեզ-1, 2 հատ)՝ 164.16մ²,
 - թեթև կոնստրուկցիաներով քոթեզ (քոթեզ-2՝ 3 հատ և քոթեզ-3՝ 1 հատ)՝ 254.7մ²,
 - կանաչապատման մակերես (սիզամարգ)՝ 2280.19մ²,
 - մայթեր՝ 113մ²,
 - ավազակոաճային շերտ՝ 193.43մ², ներառյալ ավտոկայանատեղ՝ 120մ²,
 - հանգստագողների քանակ՝ 24 մարդ:

Ծինությունների թույլատրեկի առավելագույն բարձրությունը սահմանված է մինչև 7մ:

Ըստ հայտի հանգստի գոտու լրդակիր կահավորվելու է համաձայն <<Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի:

Հանգստի գոտու տարածքում տրանսպորտի կայանատեղին նախատեսված է մուտքային մասում, դեպի լիճ ուղղությամբ նախատեսված է կանաչ գոտի և տնակներ, ինչը սահմանափակելու է վիզուալ տեսադրտը լողափից:

Համաձայն հայտի հանգստի գոտում գազամատակարարում չի նախատեսվում, ջեռուցումը և տաք ջրամատակարարումն իրականացվելու է հոսանքով: Էլեկտրամատակարարումն իրականացվելու է Ծովագարդ 10ԿՎ ուղղության 100 կՎԱ հզորության ԳԼՏԵ 3629 ենթակայանի 0.4ԿՎ օդային գծի գործող N12 հեռասույնուց՝



ճյուղավորումով կառուցելով 110մ երկարության 0.4կՎ լարման և 105մ երկարության 0.22կՎ լարման օդային գիծ:

Հանգստյան գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտորը բացակայում է, ուստի հոսքաջրերի մաքրման համար ընտրվել է կենսաբանական մաքրման կայան, որը համաձայն հայտի կապահովի Աևանա լճի համար հաստատված նորմերը: Նախատեսվում է տարածքում տեղադրել «ՅՈՒԲԱՍ 30» տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 6m^3 ծավալով ($2.54\text{m}^3/\text{օր}$) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվելու և հեռացվելու են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանին՝ պոլիպուպիլենային խողավակներով: Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր սուուգումներ կատարելու և հետագա շահագործման համար:

Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու են ջուր տարածքների ջրանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Համաձայն հայտի շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (15 մարդ), ինչը կազմում է $250.56\text{m}^3/\text{շին.ժամ}$, միջին օրական 0.348m^3 : Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովելու են՝ տեղադրելով շարժական բիոգուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Վերջիններիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Համաձայն «Վեռիխա Զուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվող հանգստի գոտու ջրամատակարարումը կիրականացվի Լճափնյա փողոց 12/3 տարածքից մոտ 260մ հեեւալության վրա գոյություն ունեցող $d=50\text{мм}$ $P=2.0\text{մքն}$. ա/էթ ջրատարից: Զրաչակման հանգույցի համար նախատեսվում է կառույցել դիտահոր:

Համաձայն հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, ինչի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ամրարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ և այլն:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են փայտ, բնական քար, կղմինդր, աղյուս, բետոնանյութ և այլն: Բետոնն օգտագործվելու է հիմնական շինությունների հիմքերի ամրացման համար, ինչը բերվելու է մասնագիտացված կազմակերպություններից՝ պատրաստի վիճակում, ըստ պահանջի:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է 350m^3 ծավալի հողային աշխատանքների իրականացում: Հանգող 110m^3 ծավալով հողային զանգվածը կօգտագործվի որպես հետլիցք, մնացած 240m^3 կօգտագործվի տարածքը հարթեցնելու նպատակով:

Համաձայն հայտի տարածքում բուսահողի ծավալը գնահատվել է 200m^3 , ինչի պահպանումն ու օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հողաբուսաշերտն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում կենցաղային աղբն է՝ $70\text{-}80\text{կգ}$ ողջ շինարարության ընթացքում և շինարարական աղբը՝ 120m^3 ծավալով: Առաջացող շինադր կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր, ըստ անհրաժեշտության:

Գոյություն ունեցող պարիսպի ապամոնտաժման աշխատանքներից առաջացող 96հա շինադրը տեղափոխվելու է համայնքի կողմից օրենքով սահմանված վայր:



Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, կանաչապատում: Նախատեսվում է տնկել 40 հատ փշատերև ծառ, մասնավորապես՝ գիհի, սոճի, կովկասյան եղևնի և 2000քմ սիզամարգ: Շառերի տեսակները համաձայնեցվելու են «Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց, ոռոգման նպատակով ջրամատակարարությունը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, թեռնման, հողային աշխատանքների, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն հայտի շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելամբ, տարածքի կենսաբազմազանության պահպանման, <<Կարմիր գրքերու հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Մասնավորապես:

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,

- փոշենստեցման նպատակով տարվա շոգ և չոր եղանակներին իրականացվելու է տարածքի ջրագում օրեկան 2-3 անգամ,

- նվազագույնի են հասցելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- շինարարության ընթացքում առաջացող բուսահողը պահպանվելու է <<Կառավարության 02.11.2017թ. N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բացառելով բուսահողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը,

- բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով,

- գործունեության տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով <<Կառավարության 31.07.2014թ. «<<Բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

- գործունեության և հարակից տարածքներում <<Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում ընկերությունը տեղեկացնելու է «Սևան» ԱՊ-ին՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով,

- բուսատեսակները տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- շահագործման փուլում իրականացվելու են լճափի մաքրման աշխատանքներ, ինչը կհամաձայնեցվի «Սևան» ԱՊ-ի հետ,



- կանաչապատված տարածքի խոտածածկի պահպանման և բուսականության բարձր աճն ապահովելու համար իրականացվելու են մշտադիտարկումներ,
 - շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահպանության կուտակումներից, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
 - շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Համաձայն հայտի՝ գործունեության իրականացման ընթացքում /շինարարական և շահագործման փուլեր/ միջոցառումների կատարման վերահսկողությունն իրականացվելու է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահատել 350հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. << դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Աևան» ազգային պարկի 3-րդ ռեկրեացիոն և 7-րդ տնտեսական գոտիներում և երկար տարիներ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Շինարարության փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, <<ԳԱԱ Սևանա լիճ պահպանության փորձագիտական հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանը, Ծովազարդի համայնքապետարանը: Հայտը լրամշակվել է հաշվի առնելով նաև ստացված առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Ծովազարդի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարման դեպքում նախատեսել լրացույցի միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանհիտարական նորմերի պահպանմանը:

- Ծինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղի կուտակումները:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը, լճափի մաքրման աշխատանքները համաձայնեցնելու «Անան» ԱՊ-ի հետ:

- Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N57 որոշման պահանջներով, բացառել՝ Սևանա լիի աղտոտումը, վտանգավոր նյութերի, կերտացրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:

- Ապահովել հայտով նախատեսված մաքրման կայանի տեղադրումը:



- Գործունեության և հարակից տարածքներում «Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

- Առաջնորդվելով << կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի S. Ասլանյանի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքի Լճափնյա 12/1 հասցեում նախատեսվող հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վեա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Ա. Վարդանյան